

ՄՈՒՍՍԱԼԵՌԱՆ ԼԱՅ ԺՈՂՈՂՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Գ. ՍՎԱԶԼՅԱՆ

Կիլիկիայի հարավային մասում ձգվում է Ամանոս լեռնաշղթան, որի զաղաթներից մեկը կոչվում է Մուսա լեռ։ Մուսա լեռը գտնվում է սլատական Անտիոքից քսան կիլոմետր հյուսիս-արևմուտք, Ալեքսանդրէտ զավառի հարավ-արևմտյան կողմում (Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափանկյունում)։ Լեռան լանջերին փոփած հայաբնակ զավառը կոչվում է Զերել Մուսա կամ Սվեղիա, որի գյուղերն են՝ Բիթիաս, Հաջի Հարիրլի, Յոզուն Օլուկ, Խրզրը Բեկ, Վակրֆ և Քարուսին։ Լեռնալանջի ամենարարձրում Բիթիասն է, մնացած գյուղերն ավելի ներքևումն են, իսկ Քարուսին, որը լեռան ստորոտին է, տարածվում է Միջերկրական ծովի ափին։ Այդ վայրերում կատարված հնադիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են պատմական Սելևկիա քաղաքի ավերակները։ Ամենայն հավանականությամբ Սվեղիա բառաձևը հնագույն այդ տեղանվան արձագանքն է։

Սվեղիայի, հայաբնակ այդ զավառի կաղամվորման ու նրա բնակիչների անցյալի մասին մատենագրական բլ մի սկզբնաղբյուր մեզ չի հասել։ Ընթադրվում է, որ Կիլիկիայի անկումից հետո (1375) հայերը զաղթել են այդ վայրերն ու բնակություն հաստատել։ Նրանց պատմության հետագա շրջանների մասին ես փաստական հավաստի տվյալներ չունենք։ Միայն 1915 թ. Մուսա լեռան հերոսամարտն աշխարհին հայտնի դարձրեց այդ տեղավայրն ու նրա բնակիչներին։ Շատերն սկսեցին հետաքրքրվել նրանց կյանքով ու պայքարով։

Սվեղահայերը դեռ մինչև այժմ հիշում ու պատմում են հասարակական-քաղաքական այդ իրադարձությունները։ 1915 թ. հուլիսի 13-ին սուլթանական կառավարությունից ստացված հրովարտակր հայերին պարտավորեցնում էր յոթ օրվա ընթացքում զաղթել Սիրիայի անապատները։ Նրանք ընդդիմանում ու չեն ենթարկվում կորստաբեր հրամանին։

Այդ օրերին նրանցից ամեն մեկը երգվում է. «Իս հուս ձենուց իմ, հուս ալ է բըրմիռնէմ, իս չըմուրթօ յասւէր բիմը միռնիլ, թվունդը ծառիս դըմիռնէմ յաս դիզը, թաթէ մուհաշքը չըմ ուրթօ»¹։ Բողոքի ու վրեժխնդրության զղացումը համակում է բոլորին. այր ու կին, մանուկ ու ծեր թողնելով իրենց ունեցվածքը, բարձրանում են Մուսա լեռան զագաթը՝ կռվով դիմադրելու թշնամու բազմահազար զորքերին։

Հերոսական հաղթանակով է վերջանում Թաթար Ալանքի ճակատամարտը. սակայն հակառակորդը վերսկսում է հարձակումը, իսկ սվեղահայերի սննդամթերքը աստիճանաբար սպառվում է։ Հորդառատ անձրևը թրջում է մարդկանց, անդորժածելի դարձնում նրանց ընդամենը 300 որսորդական հրացանի վառոցը։ Այնինչ թշնամին նորանոր ուժեր է կենտրոնացնում՝ լեռը բարձրացած ըմբոստ հայերին սլաժեկում։ Սվեղահայերը քառասուն օր ու դիշեր լեռնային համառ մարտեր են մղում, սակայն չդիմանալով ստեղծված անելանելի պայմաններին՝ հատկապես ցրտին ու սովին, նրանք հուսահատված, դրսից օղնություն ստանալու մասին են մտածում։ Իրար են միացնում սպիտակ սավանները, վրան կարմիր խաչի ազդանշանը գծելով՝ կախ են տալիս լեռան լանջից։ Միջերկրականի այս կողմերից անցնող ֆրանսիական մի ռազմանավ նրանց փոխադրում է Պորտ-Սաիդ, ուր նրանք պատսպարվում են բրեղենտյա վրանների տակ։ 1919 թ. Ֆրանսիան զրավում է Սիրիան, ընդ որում Մուսա լեռը։ Սվեղահայերը վերադառնում են իրենց ծննդավայրը։ Սակայն նրանց վիճակված չէր այդ վայրերում ապրել, 1939 թ. անդլո-ֆրանսիական դիվանագիտությունը։ Խուրթիային է հանձնում Իսկենդերունի (Ալեքսանդրետ) շրջանը, որի մեջ էր նաև Մուսա լեռը։ Իրենց մոտիկ անցյալը չմոռացած սվեղահայերն ստիպված տեղափոխվում են Լիբանանի Այն-Ջար կոչվող վայրը, տարիներ շարունակ երազելով վերադառնալ մայր հայրենիք,

¹ Ես այստեղ եմ ծնվել, այստեղ էլ կմեռնեմ. ես թշնամու հրամանով զերի չեմ գնա՝ չարչարանքով մեռնելու. հրացանը ձեռքիս կմեռնեմ այստեղ, բայց զաղթական չեմ դնա։

Այստեղ և հետագայում բարբառային բառերի մեջ շղատառով տրված ա, ու և օ ձայնավորները կարդալ, համապատասխանաբար, ա, ու և օ։

ապրել ու ստեղծագործել նրա բարգավաճման համար: 1946 թ. իրականանում է սփյուռքահայություն, այդ թվում նաև սվեդահայերի երազանքը, և նրանք ներգաղթի քարավաններով գալիս ու հաստատվում են Հայաստանում: Հայրենիքում նրանք ապրում են խաղաղ ու ստեղծագործ կյանքով, եռանդուն ու նվիրված աշխատանքով բարեկեցիկ ու հարմարավետ պայմաններ ստեղծում իրենց հասարակական կեցության համար: Այս նոր հանգամանքներում սոստիճանաբար փոխվում, զարգանում է նաև նրանց հասարակական գիտակցությունը: Մեր երկրում ծավալված համատարած գրագիտության, տեխնիկայի ու մշակույթի վերելքի ներկա պայմաններում հետզհետե անհետանում են ինչպես այլ վայրերի, այնպես էլ Սվեդիայի երբեմնի բարքերն ու սովորությունները, քարքառն ու բանահյուսությունը: Սրան նպաստում է նաև այն, որ սվեդահայերն առաջվա նման միախմբված չեն ապրում, այլ ցրված են Հայաստանի տարրեր վայրերում:

Այս հանգամանքը նկատի ունենալով, աշխատել ենք գրի առնել և անվերադարձ կորստից չփրկել սվեդահայերի բանահյուսության մի շարք նմուշները²:

Դարերի պատմություն ունի սվեդահայերի բանահյուսությունը: Ժողովրդական այդ պարզ ու անպաճույճ ստեղծագործությունների մեջ շուրջ ու կենդանություն է ստացել աշխարհագրական այն միջավայրը, որտեղ ապրել ու պայքարել են նրանք: Ժողովրդական ստեղծագործություններում պատկերավոր ու գեղարվեստական ոճով արտացոլվել են այդ վայրի բուսական ու կենդանական աշխարհը, գյուղերն ու քաղաքներն իրենց բազմազգ բնակչությամբ և յուրահատուկ կենցաղով: Ամենաշնչազանգվածային սվեդահայերն ունեցել են ժողովրդական բանահյուսության բոլոր ժանրերի նմուշներ, սակայն ոչ բոլորն են մեզ հասել:

Մեր գրի առած նյութերի մեջ կան վիպական և քնարական բնույթի ստեղծագործություններ: Ուշագրավ են հրաշապատում հեքիաթները, որոնք վաղնջական շրջանի աշխարհըմբռնման արգասիք լինելով, խտացնում են անեմիստական մտածողության տարրեր: Այդ կարգի հեքիաթներից է «Քաշէշ դաղը» (Քեշիշ լեռ)³, որտեղ պատմվում են թագավորի կրտսեր որդու արկածները, թե ինչպես իմաստուն Աղվեսի օգնությամբ նա հաղթում է բնության ու հասարակության շար ուժերը մարմնավորող երեք, յոթ և ապա քառասուն զլխանի դեերին, ոչնչացնում օվկիանոսային ահռելի հրեշի մեջ ապրող կախարդին և ձեռք բերում ոսկի արտադրող հրաշալի թասն ու սփռոցը: Բնության տարերային ուժերի սանձահարման և այդ ուժերը մարդու կամքին ենթարկելու մասին է ակնարկում խրատա-դաստիարակչական «Ջրբլն դղան» (Տգեղ տղան) հեքիաթը: Արտաքին գեղեցկությունից զուրկ, բայց մարդկային ազնիվ հոգու տեր Ջրբլնը բարյացակամ ու հոգատար վերաբերմունք է ցույց տալիս օգնության կարոտ մրջյուններին, վիրավոր ձկանը ու մեղուններին: Մրջյունը, Մեղուն և Ձուկը, որոնք մարմնավորում են բնության տարրերը՝ հողը, օդը և ջուրը, իրենց հերթին օգնում են Ջրբլն տղային՝ գեղեցկություն և երջանկություն պարգևելով նրան:

Միշտ լավին ու կատարյալին հասնելու մարդկային անպարփակ ձգտումների մասին է «Քայլ-ըր իլան Ախպարը» (Քույրը և եղբայրը) հրաշապատում հեքիաթը: Իրենց կյանքից դժգոհ՝ նրանք ցանկանում են «նուր պուն մը հասգանիլ ախշարէն» (նոր բան հասկանալ աշխարհից): Գնում են նոր կյանք փնտրելու Որոնումների ու մաքառումների դժվարին ճանապարհին Քույրը բարոյապես սայթաքում է՝ դառնալով շար Դևի գործակիցը: Այնինչ եղբայրը պայքարելով հաղթում է դևին, խաղաղ ու երջանիկ կյանք ստեղծում իր և իր նմանների համար:

Ուշագրավ է, որ Սվեդիայի այս հրաշապատում հեքիաթների մեջ մեծ դեր ունեն գիրն ու գիրքը, մարդկանց ու անասունների լեզուն իմանալու Օրինակ, դպրոցում դասատուների ու գրքերի շնորհիվ իմաստնացած շքավոր ընտանիքի ծնունդ «խելութ տղան» (խելոք տղան) կարողանում է վարպետորեն օգտվել կախարդական գրքից ու թագավորի աստիճանի հասնել:

Մի այլ հեքիաթում Ավչեն (որսորդը) երջանիկ է, քանի որ իր բարեսրտության համար օձը նրան սովորեցրել է կենդանիների լեզուն հասկանալու գաղտնիքը: Դրա շնորհիվ նա կարողանում է նախօրոք համապատասխան միջոցներ ձեռք առնել, կանխել վտանգը և պայքարել գիշատիչների դեմ: Ամենայն հավանականությամբ, այս հեքիաթում իր փոխաբերական արտացոլումն է դտել ոչ միայն մարդու պայքարը բնության երևույթների դեմ, այլև օտար երկրում ապրող պանդխտի համոզմունքը՝ «թէ գուզիս դուշմանեստ հաղթիլ անուր լիզօն սուրվէ» (եթե կուզես թշնամուդ հաղթել, նրա լեզուն սովորիր):

Այդ նյութերը գրի ենք առել Շահումյանի, էջմիածնի և Հոկտեմբերյանի շրջաններում բնակվող սվեդահայերից:

³ Սույն հոդվածի բանահյուսական հղումները մեջբերված են մեր գրի առած «նմուշներ սվեդահայ ժողովրդական բանահյուսության» հավաքածուից:

Հրաշապատում հեքիաթների ուրույն տեսակն են խոհա-փիլիսոփայական հեքիաթները. որոնք գեղարվեստորեն արտացոլում են տեղի բնակչության դարավոր կենսափորձը: Այդ առումով ուշադրավ չհեքիաթային Շահյարա թագավորը, նրան թվում է, թե իրենից հարուստ, իրենից խելացի մարդ չկա աշխարհում, և երբ տեսնում է «ախշարհը էն աղվոր աշկէնը» (աշխարհի ամենագեղեցիկ աղջիկը), իսկույն տարվում է նրանով: Բայց քանի որ այդ սոսկ երևութական հափշտակություն էր և ոչ աղջկա ներքնաշխարհի նկատմամբ տաժած խոր ու աղնիվ զգացմունք, ուստի նա: առաջին իսկ փորձությանը չի դիմանում: Երբ կախարդուքի միջոցով աղջիկը ժամանակավորապես աղավաղում է իր դեղեցկությունը, Շահյարան հիասթափվում է նրանից և ոչ միայն որոշում է լքել գեղեցկությունից զրկված այդ աղջկան, այլև ափսոսում է, որ նրան է նվիրել իր մատանին: Առավոտյան աղջիկը ներկայանում է նրան իր նախկին հմայքով, բազմաթիվ մատանիներից ընտրում է Շահյարային ու ասում. «Իսա ախշուրն իմ, դժուր ի հասգընուլ գէ» (ես աշխարհն եմ, դժվար է ինձ հասկանալը): Ժողովուրդն իր դարավոր կենսափիլիսոփայությամբ հանգել է նիշտեղրակացության՝ աշխարհի իրերն ու երևույթները դժվարամատչելի են, անհնար է անմիջապես բերնել նրանց լավն ու վատը: Ուշագրավ է նաև «Թաքավիրէն ըրք դզան» (թագավորի երեք սղան) հեքիաթը: Երեք տղաները իրենց շրջահայաց վերաբերմունքով ու առողջ դատողությամբ կարողանում են գտնել երևույթի պատճառի պատճառը: Հիշենք նաև «Խլուք բարոյը» (խելացի պապիկը, որը սպառիչ կերպով պատասխանում է վեզիրի տված բոլոր հարցերին):

Սվեդահայերի առօրյա կյանքն ու հարաբերությունները գեղարվեստորեն արտացոլված են նրանց իրապատում հեքիաթներում: Ժողովրդական այս ստեղծագործությունների փոքր ծավալն ու սյուժետային գծի հանկարծակի լուծումը նրանց տալիս է ժողովրդական ներավայելի տեսք: Իր գաղափարական բովանդակության նպատակասլացությամբ հետաքրքիր է «Հուր փիրուլը հիրէն միշը գիյնա» (հոր փորողը հորը կնկնի) իրապատում հեքիաթը: Տարածված այս մոտիվի հիշյալ տարբերակում առանձնապես բնորոշված է թագավորի նենգ վեզիրի և իր արդար վաստակով ապրող շարքաթ ձախուղի (օշարակ ծախողի) դասակարգային հակամարտությունը: Եթե շարքաթ ձախուղն աշխատավորության ներկայացուցիչն է, ապա վեզիրը, ընդհակառակը, ունենալով ամեն ինչ, աչք է դնում նաև նրա ստանալիք շնչին բախշիչին (նվերին):

Հետաքրքրական է հետևյալ ավանդապատումը, որտեղ պատմվում է, թե ինչպես Քրիստոսը երկնքից ձանձրացած իջնում է երկիր մարդկային սովորական կյանքով ապրելու: Նա, խուսափելով իր քմահաճ կնոջ հետ ընդհարվելուց, կատարում է նրա բոլոր հրամանները, դույլերով ջուր է կրում, աղբն է թափում: Այնուամենայնիվ, հակասությունները սրվում են ամուսինների միջև: Հուսահատված Քրիստոսը ցանկանում է փախչել այս աշխարհից, բայց որոշում է իր գերբնական կարողությունների գաղտնիքը հայտնել գոնե իր որդուն և ասում է. «Թը հիվունդ մը գըղիսնօս ագար իս կլխէն գայնու՞մ իմ, հուն կնօ, չարր գուգիս իլլա՞ճ դօր գընուղնը, ագար իս վըղուցը յիրվան գայնու՞մ իմ՝ շընուղնուր» (երբ մի հիվանդ կտեսնես, եթե ես նրա դիխի կողմը կանգնած լինեմ, այնտեղ գնա՛, ինչ դեղ ուզում ես տուր. կառողջանա, եթե ես ոտքերի կողմը կանգնած լինեմ՝ չի առողջանա): Մի օր տղային հրավիրում են հիվանդ թագածառանգին բուժելու, գնում տեսնում է իր հայրը՝ Քրիստոսը, կանգնած է հիվանդի ոտների մոտ և ոչ մի կերպ չի հեռանում: Տղան մոտենում է ու նրա ականջին շնչում. «Ուշէ՞դ փախէ, էմ մարը գուկօ» (շուտ փախիր, մայրս դալիս է): Քրիստոսը սարսափահար հեռանում է: Սա հայտնի «Զար կնկա հեքիաթի» տարբերակներից մեկն է: Այս տարբերակում բնորոշ է այն, որ ժողովուրդը, հերքելով Քրիստոսի գերբնական, աստվածային էությունը, նրան ոչ միայն զրկում է սրբի լուսապսակից, այլև պատկերում է որպես սովորական մի մարդու, որին ևս հատուկ են մարդկային թուլությունները:

Սվեդահայերն ունեն նաև սեղմ ու պատկերավոր առածներ ու ասացվածքներ, որոնց մեջ գեղարվեստորեն արտացոլված են ժողովրդական բազմադարյան կենսափորձով ստուգված ճշմարտություններ. «Յառանչ մինարէն դիղը խաղրե, սունրա գայնըցօր գէ» (առաջ մինարեի տեղը պատրաստիր, հետո կանգնեցրու այն), ըստ որի նախքան գործն սկսելն անհրաժեշտ է լրջորեն նախապատրաստվել: Խորիմաստ է նաև «Ղայրղեն մի՛նձը շուղ թրի գըննօ, ան բաթմը՜ղ դըննօ» (մակույկի մեծը (դեկավարը), եթե շատեր լինեն, այն կխորտակվի) ասացվածքը: Գեոևս կյանքի փորձ չունեցողին ասել են՝ «Իհա հուրդուրան ճօր անցու՞մ չէ» (ոտնամանը դեռ ջուր անցած չէ):

Մեր ժողովրդի հոգեկան կերտվածքին խիւստ բնորոշ է աշխատասիրությունը: Ավելիացին, ինչպես գաղիաշխարհում ապրող ամեն մի հայ, գիտակցել է, որ աղնիվ ու քրտնաջան աշխատանքով է միայն հնարավոր գոյությունը պահպանել: Այդ է հաստատում «Ջանաթը իսգում մագնա է. յօր ըր գուրթուս հիղիտ դուրթօ» (արհեստը ոսկյա մատանի է, ուր որ գնաս, հետդ կգնա) արտահայտությունը: Գովաբանելով աշխատասիրությունը, նրանք եզրակացրել են. «Իվաղ դըրէն աղվոր է, քան դբաողուղ ասլանը» (պտավող (որոնող) աղվեսն ավելի լավ է, քան պառ-

կող առյուծը)։ Սվեդիացին իր շարքաշ աշխատանքով «Քուրը թը դըքրպցէ, ասը գըհանէ» (եթե քարը ձգմե, ջուր կ'անե), այսինքն քարից անգամ ջուր կքամի, անհնարինը հնարավոր կդարձնի։ Սակայն արդար վաստակի մարդիկ լավ գիտեն, որ ոչ բոլորն են իրենց նման աշխատասեր, որ կան նաև այնպիսիները, որոնք ուրիշի աշխատանքով են հղփացել և բոռերի նման անկարող են մեղվի քրտնաջան աշխատանքի քաղցրությունը հասկանալ ու ասել են. «Ջամբուրեն յիդիվը միդը մը՝ պատվէ» (բոռի վրա մեղը մի փնտրիր)։ Այսպիսով «մեյը կուղէ, մէյը գիշէ» (մեկը կուտե, մեկը կդիտե)։ մի կողմում՝ անաշխատ հարուստներ, մյուս կողմում՝ ծանր աշխատանքի մարդիկ։

Նյութական բարիքների արտադրությանը շմասնակցող ունեորենների տունը միշտ լի է ու առատ. «Քօր տանգից դօնը ուծը լիղա յալէ գըղըգնրվա» (Քյոռ դանակենց (բութ դանակ՝ մակա-նուն է) տունը օձի լիդի անգամ կգտնվի)։ Նրանք «Շուղ հարսստ ին, րմրքընթը քուքը ուղուղ ին» (չատ հարսստ են, բայց քթի կեղտն ուտող են), նաև եսասեր են՝ «Յուփը գիփէ, ղնգէն գըթափէ» (ափի մեջ կեփե, եղունգի մեջ կթափե)։ Այդ նույն իմաստը կա նաև «Արիվ թըի գըննօ ախշարա չծիթիր, գիսպեն յարիյա չպիծնիր» (եթե արև լինի, աշխարհի վրա չի ծագի, ոսկին կիսելով չի բաժանի) ասացվածքի մեջ։

Այստեղ ոսկին ընկալվում է որպես հասարակականորեն կատարված աշխատանքի արդյունք, որն իրավացիորեն պետք է պատկանի միայն ստեղծողներին։ Սակայն բոլորովին հակառակն է. աշխարհը լի է աշխատավոր ժողովրդի ստեղծած բարիքներով, բայց հենց նրանք՝ այդ ստեղծողներն ապրում են նեղվածքի մեջ. «Ախշուրը բուլ էղիլ է, ղունդուրաս ալէ նիղ. չա՛ հասգըցուա աշխարհը լի է կղել, ոտնամանս՝ նեղ. ի՛նչ հասկացա»)։ Աշխարհի լիությունից օգտվում են հարուստները, իսկ աղքատը գիշերը քաղցած փորով քնել չի կարողանում՝ «Լուծէն խիթուծը քնէցիր, քաղցու՛՛՛՛ փուր չը քնէցիր» (օձից խայթվածը քնել է, քաղցած փոր [ունեցողը] չի քնել)։ Ինչ խոսք, որ հասարակական այդ անհանդուրժելի պայմանները ժողովուրդը մշտնջենական չի համարել և իրեն հատուկ լավատեսությամբ հավատացել է, թե «ճաննաթէն ճամփունքը, ճըհէնէմին կասնա» (դրախտի ճամփան դժոխքից է անցնում)։

Պատկերավոր ու խորիմաստ են նաև նրանց օրհնանքներն ու անեծքները։ Բնությունը վերականգնանացնող ուժերի նկատմամբ ժողովրդի տածած անհուն սիրո ու երկյուղածության արտահայտությունն ենք տեսնում մի շարք օրհնանքներում, որտեղ հողն ու ջուրը, ծաղիկն ու տերևը դառնում են մարդկային բնավորության լավագույն հատկությունները գնահատող չափանիշ։ Օրինակ.

- | | |
|------------------------------------|------------------------------------|
| «Չուր թըղ պունիս՝ դանաչ թըղ տառնօ» | (Չոր թող բունես՝ կանաչ թող դառնա)։ |
| «Թըղ ձլլիս, թըղ ձաղկիս» | (Թող ձլիս, թող ձաղկիս)։ |
| «Քիլուձ դիղիտ վուրթ թըղ փուսնօ» | (Քայլած տեղդ վարդ թող բուսնի)։ |
| «Ծիթինէն նաղուր դիրիվ դօ, | (Զիթենու վրա ինչքան տերև կա, |
| քանզան դարա թըղ արրէս» | այնքան տարի թող ապրես)։ |

Կենսասիրությամբ ու մարդասիրությամբ են համակված այս օրհնանքները։ Ժողովուրդը մարդկային վատ արարքների համար որպես բանադրանք է հնչեցրել «էմ ամագը իղ թըղ ըննօ, թըղ հալլա, ֆիթա յրրվատ» (իմ երախտիքը թող յուղ դառնա, թող հալի, թող թափվի քո վրայից) և կամ՝ «Հուցը ծիավուր, տօն յայան, ուրթուս, ուրթուս չըհասնէս ղը» (հացը ձիավոր, դու՝ հետիոտն. ընա, գնա, չհասնես նրան) անեծքները։

Սվեդահայերն ունեն նաև բազմաթիվ հանելուկներ, որոնք լինելով պատկերավոր հարցադրումներ, գաղափար են տալիս շրջապատի բնության զանազան երևույթների, բուսական ու կենդանական աշխարհի, ինչպես նաև տեղի բնակչության կենցաղի մի շարք հանգամանքների մասին։ Բնության անձնավորման վերապրուկին ենք հանդիպում հողմի մասին գաղափար տվող հանելուկում.

- | | |
|----------------|---------------|
| «Հիկկա դունա, | (Հողի ունե, |
| Գուվդու չունա, | Մարմին չունի, |
| Ադ չա՞ է»։ | Այդ ի՛նչն է)։ |

Ի՞նչ կամ՝

- | | |
|-------------------------|----------------------------|
| «Գդինչիմ ծան գուդօ, | (Կանչում եմ՝ ձայն է տալիս, |
| Չար ըր գասիմ, զան դասէ, | ինչ ասում եմ, այն է ասում, |
| Ադ չա՞ է»։ | Այդ ի՛նչն է)։ |

«Յանդօն է» (արձագանքն է) լինում է պատասխանը։ Ապրելով թուրք-արաբական շրջաններում, սվեդահայերը իրենց բանահյուսության մեջ արտահայտել են այդ ժողովուրդներին հատուկ կենցաղային տարրեր։ Գուցե և արևելքի փողոցներով տարվող հարեմի կանանց պատգարակաձև ամպհովանու պատկերավոր վերհուշն է կրիայի մասին ասված հետևյալ հանելուկում.

«Վերքը դախդուկ,
Յէրվան դախդուկ,
Միշը գինուղը
Սիւլ աշկէն.
Ադ շա՞ է»:

(Վրան տախտակ,
Տակը տախտակ,
Մեջում եղողը՝
Սև աղջիկ.
Այգ ի՞նչն է):

Վերոհիշյալ ենթադրութիւնն ավելի կհիմնավորվի, երբ նկատի առնենք «սև աղջկա» ներկայութիւնը:

Սվեդիայի, ինչպես և մի շարք վայրերի բնակարաններում առաստաղը հենվել է մեկ առանցքային սյան վրա. ահա այդ մասին է հետևյալ հարցադրումը.

«Բս պուն մի կիգիմ.
Դարուխը կլխէն դիվա»:

(Ես մի բան գիտեմ.
Ափսոսն գլխին կպտտվի):

Այս պատկերն ակամայից մեզ հիշեցնում է տեղի հետ կապված կենցաղային մի սովորույթ. Հայտնի է, որ արար կանայք բացառիկ են իրենց հավասարակշռված քայլվածքով. նրանք կարող են գլխի վրա տանել ջրով լի հսկա սափորը և կամ լվացքի տաշտը, որի միջից դուրս են նայում երեք-չորս փոքրիկ մանուկ:

Տեղի բուսական ու կենդանական աշխարհն իր արտացոլումն է գտել նրանց հանելուկներում: Մովեզրյա վայրերին բնորոշ են ջրային օձերը.

«Յարիվը դունուսդա կուշուղնօ,
Համ կուսուղօ, համ կուլուղօ»
Իսկ չղջիկը՝
«Վըղվէն տուր վիր,
Կլօխը տուր վար,
Յիրէյը բառգուձ է:
Բիվիր կունա,
Փիղօր չունա.
Միրգա է,
Հիկկա գունա,
Կիշիրը քօն չունա,
Ադ շա՞ է»:

(Արևին է նստում տաքանում,
Եվ սողում է, և լողում):
(Ոտքերը դեպի վեր,
Դուխը՝ դեպի վար,
Յերեկը պառկած է:
Թևեր ունի,
Փետուր չունի.
Մերկ է,
Հոգի ունի,
Գիշերը քուն չունի,
Այգ ի՞նչն է):

Խլուրդի սպառիչ նկարագիրն է.

«Կիդնէն դուկը պայն կունա,
Տուրուցունց նաֆաս չունա,
Ագանչ գունա, աչք չունա,
Վղվա գունա, ակա չունա»:

(Գետնի տակը բույն ունի,
Դրսից չունչ առնել չունի,
Ականջ ունի, աչք չունի,
Ոտքեր ունի, պոչ չունի):

Սվեդահայերն ունեն նաև անմիջական ու հուզիչ քնարական երգեր ու խաղիկներ, որոնք գեղարվեստորեն արտացոլում են նրանց հույզերն ու ապրումները, խինդն ու վիշտը, պայքարն ու հաստատ հավատքը լավագույն գալիքի նկատմամբ: Սվեդահայերի հոգեկան ներաշխարհի բարդ ու հակասական տարրերն զգացվում են նաև նրանց երգերում. լիրիկական ջերմությամբ հագեցած տողերին հաճախ գալիս է լրացնելու փոթորկոտ էպիկան: Օրինակ՝

«Նանէ՛ նազլը դղաս, նանէ՛,
Նանէ գասիմ, գըրադըցնիմ քէ
Անօշ քօն»:

(Նանիկ, նազանի տղաս, նանիկ,
Նանիկ եմ ասում, պառկեցնում եմ քեզ,
Անուշ քուն):

Մայրն իր օրորոցայինի այս հատվածը երգելուց հետո որդուն զինվորագրում է Մուսա լեռան հերոսամարտին և ավելացնում.

«Համօ դագայը գուկօ,
Գըպիրե քե թօր»:

(Հիմա հայրդ կգա,
Կրերե քեզ թուր):

Սվեդահայերն ունեցել են նաև սիրային քնարերգության լավագույն նմուշներ: Առանց համակրանքի կատարված բռնի ամուսնական գործարքին է հակադրված հետևյալը.

«Աշկէն ուզողին դվիր,
Սաղգա ուրթօ դըխնդօ»:

(Աղջիկն ում ուզում է նրան տվեք,
Մեռնի երթա էլ կխնդա):

Ավեղահայերի երգերը մեզ զաղափար են տալիս նաև ամուսնության հետ կապված մի շարք հանգամանքների մասին: Այդտեղ ևս բնորոշված է եղել հարսնացուի համար գլխագին պահանջները:

«Հեյ, Թրթր չիսո, քալաշ, (Հեյ, Թրթր չենց փեսա, պատվական,
Չո՛ւց ուղօնք զԱղսափիթր քե րալաշ Ինչպե՛ս Նղսարեթր քեզ ձրի տանք):

Այդ երգերից մենք տեղեկանում ենք, որ հարսանեկան ծիսակատարության մեջ իր տեղն է ունեցել նաև հինան:

«Թրթր չենց դօնը տինօյ է, (Թրթր չենց տունը ալն կողմն է,
Նուրիցլն ծառը հինօյ է»: Նուրիցլայի ձեռքը հինա է):

Իսկ հինա դնելու ժամանակ երգել են:

«Իսգը թասէն միճը հինօն, գուշաղիմ, (Ոսկի թասի մեջ հինան եմ շաղում,
Արգութը սանդղում գրծակեր կու սանդ- Արծաթ սանդղով մազերն եմ սանրում):
րիմք:

Սրտառու է հարսին տանելու ժամանակ երգված երգը:

«Աշխար աշկէնը սազվում նսդում է, (Շուկ աղջիկը զարդարված, նստած է:
Գարմէր ծէնը ալարում, գարում նոնինէն, Ալ ձին թամբած, կապած է նոնենուց,
Մո՛ւ լօ, հա՛յ մար, մո՛ւ լօ, առէն Մի լա, հեյ մայր, մի լա, առան տարան
դարէն գէ, նրան,
Շաքրում, միղրում մինձում աշկենը առէն Շաքարի, մեղրի մեջ մեծացրած աղջիկն
դարէն գէ»: առան, տարան նրան):

Եթե հարսի ծնողների համար դժվար է իր զավակից բաժանվելը, ապա անասելի ծանր ու ողբերգական է թուրք հարստահարիչների կողմից առևանգված աղջիկների ու նրանց հարազատների հոգևոր ճակատը: Ահա նման եղբերակի մի նմուշ:

«Լեյլ յամանի, յամանի, (Լեյլ յամանի, յամանի,
Օֆ, լեյլ յամանի աման, Օֆ, լեյլ յամանի յաման,
Տոուն առչիվ աղրլ իր, Դոան առչև փարախ էր,
Ճաղցուց ջամփէ շաղրլ իր, Ջրաղաղի ճամփան քարոտ էր,
Ջրոիցա քուր մը պանցրըցու, Չոքեցի մի քար վերցնելու,
Նշանում աշգրնի փախցրցէն, Նշանված աղջիկներ փախցրեցին,
Լեյլ յամանի, յամանի, Լեյլ յամանի, յամանի,
Օֆ, լեյլ յամանի աման»: Օֆ, լեյլ յամանի յաման):

Սրտամորմոք է հնչում պանդխտի հետևյալ երգը, որը հավանաբար ստեղծվել է Մուսա լեռան հերոսամարտին հաջորդող պորտ-սալիդյան զաղթավայրում:

«Պառը դառնէ հիլիա, (Չևոքն առնում է հայելի,
Բշվէն քիշում ձիւրիա, Աշքին քսել է ծարույր,
Ասրձա խնթրիցա, Աստծուց խնդրեցի,
Ալարում ձիօն հիձնիլա, Թամբած ձին հեծնել,
Ջարալ Մուսա ուրթիլա, Մուսա լեռ երթալ,
Թիլիկնէն թօզ քաղիլա, Քաղել թղենու թուղր,
Ունգրդինին ունգալգ քաղիլա»: Ընկուզենու ընկույզը):

Այս երգի հետագա տարբերակում, իր ծննդավայրը վերադարձած, բայց մայր հայրենիքի կտրուտով տուժող ու սվեղիացին երագում է երգելով:

«Ասրձա խնթրիցա, (Աստծուց խնդրեցի,
Ալարում ձիօն հիձնիլա, Թամբած ձին հեծնել,
Հայաստան ուրթիլա, Հայաստան մեկնել,
Մակտապ ուրթիլա, Դպրոց դնալ,
Խիլք ու շնորք սուրվիլա»: Խելք ու շնորհք սովորել):

1946 թ. Հայաստանի իր դիրկը բացեց նաև սվեղահայերի համար և նրանց երազները իրականություն դարձան: